- 6 educational and development clubs (50 hours in total) conducted by youth workers, local and international volunteers,
- 17 movie screenings and discussions,
- 2 hiking and 2 excursion with the participation of 86 youngsters,
- 15 hours of outreach work in 15 educational institutions of Artik,
- 8 hours of mobile youth work in 8 educational institutions of Artik,
- 14 initiatives implemented by the youngsters of the centre,
- 10 beneficiaries' participation in the 5-day "Youth Leadership and Civic Education" camp in Aghveran,
- 304 hours of local and international projects participation,
- 2 interns passed working internship in administrative work,
- 2 local and 2 international volunteers volunteered at the centre,
- 2 meeting for awareness raising on the open youth work and creating effective partnership in the frames of NGOs with the participation of 60 representatives.



«Եվրասկումբ Գյումրի»

“EuroClub Gyumri”

Երբ. 1 մարտ - 31 դեկտեմբեր 2024 թ.

Որտեղ. Շիրակ, Արմավիր, Գեղարքունիք, Չայաստան

Նպատակ. Երիտասարդների շրջանում բարձրացնել ԵՄ կողմից ընձեռնված հնարավորությունների և միջոցառումների վերաբերյալ տեղեկացվածությունը՝ թեմատիկ միջոցառումների, նախաձեռնությունների և հանդիպումների միջոցով:

Նկարագրություն. Մարտի 1-ին տեղի ունեցավ Եվրասկումբ Գյումրիի պաշտոնական բացումը: Բացման միջոցառմանը ներկա էին ԵՄ պատվիրակության ղեկավարը, ԵՄ տարբեր երկրների դեսպաններ և ներկայացուցիչներ, ՏԻՄ և գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Տարվա ընթացքում կազմակերպվել են տարբեր տեղեկատվական հանդիպումներ, ֆիլմի դիտումներ, լեզվակիրների հետ հանդիպումներ: Հատուկ մշակված ֆորմատով միջոցառումներից է «Եվրախոհանոց»-ը, որի շրջանակներում հյուրընկալել ենք Չայաստանում Իսպանիայի թագավորության գործերի ժամանակավոր հավատարմատար Քրիստինա Սանչոյին և Լիտվայի արտակարգ և լիազոր դեսպան Անդրիուս Պուլոկասին: «Եվրախոհանոց»-ի ժամանակ հրավիրված դեսպանի հետ երիտասարդները պատրաստում են ազգային ուտեստներ, որի ընթացքում երիտասարդները հնարավորություն են ունենում անմիջականորեն և ոչ ֆորմալ միջավայրում շփվել և բացահայտել հրավիրված հյուրի մշակույթն ու առանձնահատկությունները:

When: 1 March - 31 December 2024

Where: Shirak, Armavir, Gegharkunik, Armenia

Aim: To raise awareness among young people about the opportunities and activities provided by the EU through thematic events, initiatives, and different activities.

Description: The official launch of Euroclub Gyumri took place on March 1. The opening event was attended by the Head of the EU Delegation, ambassadors and representatives of various EU countries, representatives of local governments, and partner organizations.

Various information sessions, movie screenings, and meetings with native speakers were organized throughout the year. One of the specially designed events is the “Eurokitchen,” within the framework of which we hosted the Chargé d’Affaires of the Kingdom of Spain in Armenia, Cristina Sancho, and the Ambassador Extraordinary and Plenipotentiary of Lithuania, Andrius Pulokas. During the “Eurokitchen,” young people prepare national dishes with the invited ambassador, offering them the opportunity to communicate directly and in an informal setting, and discover the culture and characteristics of the guest.



Հունիսի 5-ին «Շրջակա միջավայրի պահպանության համաշխարհային օրվա» շրջանակներում, Գյումրիի երիտասարդների համար կազմակերպվել և իրականացվել է բնապահպանության և շրջակա միջավայրի թեմայով աշխատարան, այնուհետև օրն ամփոփվել է հեծանվավարությամբ:

Հոկտեմբերի 10-ին «Հոգեկան առողջության միջազգային օրվա» շրջանակներում, աշխատարաններ են կազմակերպվել Գյումրիի և Արթիկի երիտասարդների համար, ինչպես նաև պատրաստվել են տեղեկատվական պաստառներ և տեսանյութեր 5 Արթիկ, Արմավիր, Գավառ, Գյումրի և Վաղարշապատ համայնքներում գործող «Երիտասարդների տուն» բայց երիտասարդական կենտրոնների շահառու երիտասարդների ջանքերով: Տեսանյութերը հրապարակվել և շրջանառվել են ԵՆԿ ՀԿ-ի սոցիալական ցանցերում:

Ճարունակեք հետևել էջին բաց չթողնելու առաջիկա հետաքրքիր և թեմատիկ միջոցառումները:

«Եվրասկումբ Գյումրիի» գործունեության համակարգում իրականացնում է «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն «Երիտասարդ եվրոպական դեսպաններ» (ԵԵԴ) նախաձեռնության հետ համագործակցությամբ:



On June 5, within the framework of "World Environment Day", a workshop on environmental protection and the environment was organized and held for the youth of Gyumri, concluding the day with a cycling event.

On October 10, within the framework of the "World Mental Health Day", workshops were organized for the youth of Gyumri and Artik, as well as informational posters and videos were prepared with the efforts of the young beneficiaries of the "Youth House" open youth centres operating in the communities of Artik, Armavir, Gavar, Gyumri, and Vagharshapat. The posters and videos were published and circulated on YIC NGO's social networks.

Continue to follow the page so as not to miss upcoming interesting and thematic events.

The coordination of the activities of "Euroclub Gyumri" is carried out by Gyumri "Youth Initiative Centre" NGO in cooperation with the Young European Ambassadors (YEAs) Initiative.



«ԵՄ-ն հանուն կանանց և տղամարդկանց իրավահավասարության. Միասին ընդդեմ գենդերային կարծրատիպերի և բռնության»

“EU 4 Gender Equality: Together against gender stereotypes and gender-based violence”

Երբ. 01 հունիս - 31 դեկտեմբեր 2024 թ.

Որտեղ. Շիրակ, Լոռի, Տավուշ, Հայաստան

Նպատակ. Ամրապնդել կանանց և տղամարդկանց հավասար իրավունքներն ու հնարավորությունները՝ կանանց ու տղամարդկանց դերերի հանրային ընկալումները փոխելու, գենդերային կարծրատիպերը հաղթահարելու և երեխաների խնամքի, ծնողավարման մեջ տղամարդկանց մասնակցությունը խթանելու միջոցով:

Նկարագրություն. 2024 թվականի ծրագրի գործունեության շրջանակներում կազմակերպվել է ֆասիլիտատորների վերապատրաստմանը ուղղված դասընթաց, 18 (տասնութ) «Հայրիկների ակումբ» հանդիպում-քննարկումներ, 3 (երեք) թեմատիկ հանդիպումներ և մեկ հանրային միջոցառում: Ֆասիլիտատորների վերապատրաստման դասընթացի արդյունքում վերապատրաստվել են 6 ֆասիլիտատորներ՝ յուրաքանչյուր մարզում երկու ֆասիլիտատոր: «Հայրիկների ակումբ» հանդիպում-քննարկումներին մասնակցել են թվով 87 (ութասունևյոթ) 18-ից 40 տարեկան երիտասարդ տղամարդիկ և հայրիկներ: Երեք մարզում անցկացվել են մեկական թեմատիկ հանդիպումներ՝ կապված ոչ բռնի հաղորդակցման, կոնֆլիկտների ու հույզերի կառավարման և զույգերի հաղորդակցման հետ: Թեմատիկ հանդիպումներին ընդհանուր թվով մասնակցել են 44 (քառասունչորս) 18-ից 40 տարեկան կանայք և տղամարդիկ: Նոյեմբերի 19-ին՝ Տղամարդկանց միջազգային օրվա առիթով, կազմակերպվել է մեկ հանրային միջոցառում՝ նպատակաուղղված աջակցելու տղամարդու դրական կերպարի ստեղծմանը՝ որպես անհատ, զուգընկեր, ամուսին, հայր և խթանելու տղամարդու հավասարաչափ ներգրավվածությունը ընտանիքում:

Միջոցառմանը մասնակցել են թվով 47 (քառասունևյոթ) 18-ից 40 տարեկան կանայք և տղամարդիկ:



When: 01 June - 31 December 2024

Where: Shirak, Lori, Tavush regions, Armenia

Aim: The main goal of the program is to strengthen equal rights and opportunities for women and men by changing public perceptions of gender roles, overcoming gender stereotypes, and promoting men's participation in childcare and parenting.

Description: Within the framework of the 2024 program activities, the following events were organized: a facilitator training course, 18 "Fathers' Club" discussion meetings, three thematic meetings, and one public event. As a result of the facilitator training course, six facilitators were trained, with two facilitators in each region. A total of 87 young men and fathers aged 18 to 40 participated in the "Fathers' Club" discussion meetings. Thematic meetings were held in three regions, covering topics such as non-violent communication, conflict and emotion management, and couple communication. A total of 44 men and women aged 18 to 45 participated in these thematic meetings. On November 19, in honor of International Men's Day, a public event was organized to support the creation of a positive image of men as individuals, partners, husbands, and fathers and to advocate for the equal involvement of men in the family.

The event was attended by 47 men and women aged 18 to 40.



2

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

STRATEGIC AIM

ՆՊԱՏԵԼ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎԱՍԱՆԸ

CONTRIBUTE TO THE IMPROVEMENT OF THE
SOCIAL-ECONOMIC CONDITIONS FOR THE YOUTH

ԽՆԴԻՐՆԵՐ

- 2.1. Բարձրացնել երիտասարդների մրցունակությունն աշխատաշուկայում:
- 2.2. Աջակցել երիտասարդների ձեռնարկատիրական կարողությունների զարգացմանը իրացմանը:
- 2.3. Խթանել երիտասարդների նախաձեռնողականությունը:
- 2.4. Զարգացնել կամավորության մշակույթը երիտասարդության շրջանում:

OBJECTIVES

- 2.1. To develop a culture of volunteerism among young people.
- 2.2. To increase the competitiveness of young people in the labour market.
- 2.3. To support the development and realization of youth entrepreneurial skills.
- 2.4. To promote the spirit of initiative among the youth.

Ակումբներ

Clubs

Երբ. Մայիս - Օգոստոս 2024 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նկարագրություն. «Երիտասարդական Նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի գործունեության ուղղություններից է, որի նպատակն է լեզվի ակումբների կազմակերպման միջոցով նպաստել երիտասարդների լեզվական հաղորդակցման հմտությունների զարգացմանը: 2024 թվականի ընթացքում ԵՆԿ-ում գործել են անգլերենի խոսակցական, սկսնակ և միջին մակարդակի ակումբներ, որոնց մասնակցել է 50 երիտասարդ: Անգլերենի խոսակցական ակումբը վարել է ԱՄՆ Խաղաղության կորպուսի կամավոր Մարկ Քլենսին, անգլերենի սկսնակ մակարդակի ակումբը՝ երիտասարդ մասնագետ, ԵՆԿ կամավոր Անի Ղուկասյանը, իսկ միջին մակարդակի ակումբը՝ ԵՆԿ կամավորներ Իրինա Մանուկյանը և Հրանուշ Գևորգյանը: Սկսնակ և միջին անգլերենի ակումբների ավարտին բոլոր մասնակիցները ստացել են հավաստագրեր:

When: May - August 2024

Where: Gyumri, Armenia

Description: The clubs are one of the activities of the "Youth Initiatives Center" NGO aimed at fostering the development of language communication skills among young people through the establishment of language clubs.

In 2024, YIC operated the English-speaking, middle-level and beginner-level clubs. A total of 50 young people participated in these language clubs throughout the year. The English-speaking club was facilitated by Mark Clancy, a volunteer from the US Peace Corps, while the beginner-level club was led by YIC local volunteer Ani Ghukasyan, and the middle-level club was led by YIC local volunteers Hranush Gevorgyan and Irina Manukyan. Upon completion of the beginner and middle clubs, all participants received certificates.



Ուսումնական և աշխատանքային պրակտիկա

Work and study internship

Երբ. Հունվար - Դեկտեմբեր 2024 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նկարագրություն. «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն աշխատանքային և ուսումնական պրակտիկայի հնարավորություն է ընձեռում երիտասարդներին՝ նպատակ ունենալով նրանց ծանոթացնել երիտասարդական աշխատանքին և տեսակներին (որպես սոցիալական աշխատանքի հարակից մասնագիտություն), ինչպես նաև գրասենյակային աշխատանքին և դրա գործիքակազմին: Աշխատանքային և ուսումնական պրակտիկաներն իրականացվել են ճիշակի պետական համալսարանի հետ համագործակցությամբ:

Ուսումնական պրակտիկա. 2024 թվականի ընթացքում ԵՆԿ ՀԿ-ի գրասենյակում և «Գյումրու Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնում ուսումնական պրակտիկա է անցել 24 ուսանող:

Աշխատանքային պրակտիկա. 2024 թվականի ընթացքում ԵՆԿ ՀԿ-ի գրասենյակում և ԵՆԿ ՀԿ-ի բաց երիտասարդական կենտրոններում Գյումրիում, Սպիտակում, Արթիկում, Էջմիածնում, Արմավիրում և Գավառում, աշխատանքային պրակտիկա է անցել 7 երիտասարդ:

When: January - December 2024

Where: Gyumri, Armenia

Description: "Youth Initiative Centre" NGO offers work and educational internship opportunities for young people, aiming to familiarize them with youth work and its various aspects (as a related profession to social work), as well as office work and its toolkit.

YIC has collaborated with Shirak State University.

Educational internship: During 2024, 24 students had internships at the office of YIC and the "Gyumri Youth House" open youth centre.

Work internship: During 2024, 5 young people had work internships at YIC office and the open youth centres of YIC (Gyumri, Spitak, Ejmiatsin, Artik, Armavir and Gavar).



«Կամավորների միջազգային օր 2024»

“International Volunteer Day 2024”

Երբ. 05 դեկտեմբեր 2024 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նկարագրություն. Դեկտեմբերի 5-ին «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն, Հայաստանում «Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորպուս ծրագրերի» տեղեկատվական կենտրոնի հետ համատեղ, դեկտեմբերի 5-ին Գյումրիում իրականացրեց «Ես կամավոր եմ» խորագրով միջոցառում նվիրված Կամավորների միջազգային օրվան:

Միջոցառման մեկնարկին Կամավորների միջազգային օրվա առթիվ ողջույնի խոսքով և շնորհավորական ուղերձով հանդես եկավ ԵՆԿ խորհրդի նախագահ Արթուր Նաջարյանը:

Միջոցառման առաջին հատվածում տեղի ունեցավ «Կամավոր աշխատանքի մասին ՀՀ օրենքը. հնարավորություններ ու մարտահրավերներ» թեմայով ներկայացում-քննարկում, որի ընթացքում հրավիրված անկախ փորձագետ Կարեն Տերտերյանը ոլորտի ներկայացուցիչներին, երիտասարդներին ներկայացրեց օրենքի դրույթներն ու կետերը, օրենքով պայմանավորված հնարավորություններն ու առկա դժվարությունները/մարտահրավերները:

Միջոցառման երկրորդ հատվածում, Հայաստանում «Եվրոպական համերաշխության կորպուս» (ԵՀԿ) ծրագրի տեղեկատվական արշավի շրջանակներում, տեղի ունեցավ «Եվրոպական համերաշխության կորպուսի իմ պատմությունը» թեմայով պանելային քննարկում, որի ընթացքում ԵՀԿ ծրագրի նախկին և ներկա կամավորները կիսվեցին իրենց հաջողության պատմություններով, ներկայացրեցին միջազգային կամավորության իրենց փորձը և խոսեցին վերջինիս դրական ազդեցության ու իրենց ձեռքբերումների մասին:



When: 05 December 2024

Where: Gyumri, Armenia

Description: On the 5th of December “Youth Initiative Centre” NGO in cooperation with the Info Centre for Erasmus + Youth and European Solidarity Corps programmes in Armenia organized an event entitled “I am a volunteer” dedicated to the International Volunteer Day.

At the beginning of the event the president of YIC board Artur Najaryan delivered a congratulatory speech on the occasion of the international volunteer Day.

In the first part of the event a presentation-discussion was held on the topic of “The RA Law on Voluntary Work: opportunities and challenges”. During the presentation the invited independent expert Karen Terteryan presented the provisions and points of the law, the opportunities and existing difficulties/challenges arising from the law.

In the second part of the event, within the framework of the information campaign of the European Solidarity Corps (ESC) program in Armenia, a panel discussion on the topic “My story of the European Solidarity Corps” was held, during which former and current volunteers of the ESC programme shared their success stories, presented their experience of international volunteering and talked about its positive impact and their achievements.



Հաջորդիվ տեղի ունեցավ արդեն ավանդական դարձած կամավորների ամենամյա պարգևատրման արարողությունը՝ «ԵՆԿ տարվա կամավոր» անվանակարգում, որի ընթացքում կամավորներին հանձնվեցին շնորհակալագրեր և անվանական տիտղոսներ 2024 թ. ընթացքում կազմակերպության ծավալած գործունեության մեջ ունեցած ակտիվ ներգրավվածության և կամավորական աշխատանքների իրականացման համար: Տիտղոսները տրվեցին «Տարվա կամավոր», «Տարվա միջազգային կամավոր» անվանակարգերում:

Շնորհակալագրեր և վկայականներ հանձնվեցին նաև Երիտասարդության միջազգային օրվան նվիրված միջոցառումների կազմակերպչական աշխատանքներում ներգրավված և «Կամավորների դպրոց»-ի մասնակիցներին:

Մրցանակով պարգևատրվեց նաև «Իմ պատմությունը 100 վայրկյանում» տեսանյութերի մրցույթի հաղթող Վարշամ Հարությունյանը:

Կամավորների միջազգային օրվան նվիրված միջոցառումն ամփոփվեց ոչ-ֆորմալ ժամանցային հավաքույթով:



Afterwards, YIC annual volunteer awards ceremony was held in the nomination "The Volunteer of the Year", during which awards and certificates, as well as certificates of appreciation were given to all volunteers for their active involvement in the activities of the organization and implementation of voluntary work in 2024. The titles were awarded in the following categories: "Volunteer of the Year", "International Volunteer of the Year".

The members of the "Volunteers' School" as well as the volunteers of the International Youth Day events were awarded with the certificates too.

The winner of the video contest "My Story in 100 seconds" Varsham Harutyunyan was also awarded with the prize.

The event dedicated to the International Volunteer Day was concluded with a non-formal gathering.



ԵՅԿ Հյուրընկալում

ESC Hosting

Երբ. 15 հունվար 2024 թ. – 08 հունվար 2025 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Խթանել կամավորությունը և միջմշակութային հաղորդակցությունը՝ հավասարը հավասարին ուսուցման և ոչ-ֆորմալ կրթական գործունեության միջոցով:

Կամավորի անունը. Անատոլ Դուփուի (Ֆրանսիա)

Նկարագրություն. Կամավորը պլանավորել, նախապատրաստել և անցկացրել է «Եվրոպական ակումբ» ԵՅԿ-ի «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնների սաների համար, վարել ֆրանսերենի ակումբ «Արթիկի երիտասարդների տանը» և շախմատի ակումբ՝ «Գյումրու երիտասարդների տանը», ինչպես նաև կազմակերպել է կամավորությունը խթանող միջոցառումներ, ներկայացրել իր երկրի մշակույթը, ուտեստները, պարերը և սովորույթները:



When: 15 January 2024 - 08 January 2025

Where: Gyumri, Armenia

Aim: To promote volunteerism and intercultural communication through peer-to-peer learning and non-formal educational activities.

Volunteer Name: Anatole Dupuis (France)

Description: The volunteer planned, prepared and ran a “European Club” for the beneficiaries of the “Youth House” open youth centres of YIC, taught French in “Artik Youth House” and ran a chess club in “Gyumri Youth House”, as well as organized promotional activities about volunteering and presented the culture, food, dances and traditions of his country.



ԵՅԿ Ուղարկում

ESC Sending

«Կրթություն՝ բանալի դեպի ավելի լավ ապագա»
“Education – a key to a better future”

Երբ. 30 նոյեմբեր 2024 թ. – 30 նոյեմբեր 2025 թ.

Որտեղ. Ստարա Զագորա, Բուլղարիա

Հյուրընկալող կազմակերպություն. Don Bosko Bulgaria Foundation

Նպատակ. Նպաստել երիտասարդների միջմշակութային իրազեկվածության բարձրացմանը ոչ ֆորմալ կրթական գործունեության, մի շարք միջոցառումների և աշխատարանների կազմակերպման միջոցով:

Կամավորի անունը. Ալվարդ Կարա-Գևորգյան

Նկարագրություն. Աջակցել երիտասարդների և երեխաների համար ժամանցի, տարբեր խաղերի, սպորտային և մշակութային միջոցառումների, ամառային ճամբարների և տոնավաճառների կազմակերպմանը, ներգրավվել կազմակերպության ընթացիկ ծրագրերում:

When: 30 November 2024 – 30 November 2025

Where: Stara Zagora, Bulgaria

Hosting organization: Don Bosko Bulgaria Foundation

Aim: To promote the intercultural awareness of young people through non-formal activities and organization of different events and workshops.

Volunteer Name: Alvard Kara-Gevorgyan

Description: To assist in organizing entertainment and sport activities, various games and cultural events, summer camps and fairs for children and youngsters, to be involved in on-going projects of the organization.



ԵՅԿ Ուղարկում

ESC Sending

«Construcción de paz a través de la participación juvenil 2024»

Երբ. 30 հոկտեմբեր 2024 թ. - 20 հոկտեմբեր 2025 թ.

Որտեղ. Բարսելոնա, Իսպանիա

Հյուրընկալող կազմակերպություն. Service Civil International of Catalonia (SCI)

Նպատակ. Ոչ ֆորմալ կրթական ծրագրերի միջոցով խթանել երիտասարդների շարժունությունը՝ նպաստելով վերջիններիս անձնական և մասնագիտական զարգացմանը:

Կամավորի անունը. Վիկա Դունամալյան

Նկարագրություն. Աջակցել տեղական աշխատանքային ճամբարների կազմակերպմանը, տեղեկատվություն տարածել կամավորական հնարավորությունների վերաբերյալ, իրականացնել տարաբնույթ աշխատարաններ և միջոցառումներ:

When: 30 October 2024 - 20 October 2025

Where: Barcelona, Spain

Hosting organization: Service Civil International of Catalonia (SCI)

Aim: To promote youth mobility contributing to the personal and professional development of young people through non-formal educational activities.

Volunteer Name: Vika Dunamalyan

Description: To assist in organization of local workcamp, provide information on volunteering opportunities, implement various workshops and events.



ԵՅԿ Ուղարկում

ESC Sending

«ESC51 – Volunteering Projects»

Երբ. 29 սեպտեմբեր 2024 թ. – 31 օգոստոս 2025 թ.

Որտեղ. Թուրին, Իտալիա

Հյուրընկալող կազմակերպություն. Giovani e Territorio - Villa Olanda

Նպատակ. Նպաստել երիտասարդների անձնական և մասնագիտական զարգացմանը, ինչպես նաև խթանել միջմշակութային հաղորդակցությունը՝ ոչ ֆորմալ կրթական ծրագրերի, մի շարք միջոցառումների և աշխատարանների կազմակերպման միջոցով:

Կամավորի անունը. Ալլա Մխեյան

Նկարագրություն. Իրականացնել տարաբնույթ աշխատարաններ, դասընթացներ և միջոցառումներ տեղի երիտասարդների համար, աջակցել կազմակերպության ընթացիկ ծրագրերին:

When: 29 September 2024 - 31 August 2025

Where: Turin, Italy

Hosting organization: Giovani e Territorio - Villa Olanda

Aim: To contribute to the personal and professional development of young people, to promote intercultural dialogue through non-formal educational activities, different events and workshops.

Volunteer Name: Alla Mkheyan

Description: To implement various workshops, trainings and events for the local youth, to assist the on-going projects of the organization.



ԵՅԿ Ուղարկում

ESC Sending

«KEF - Let Us Think Green»

Երբ. 27 հունիս - 14 հոկտեմբեր 2024 թ.

Որտեղ. Պոլիա, Իտալիա

Հյուրընկալող կազմակերպություն. KALISTRATIA ODV

Նպատակ. Նպաստել շրջակա միջավայրի պահպանությանը, երիտասարդների կարողությունների զարգացման միջոցով ձևավորել ավելի ներառական և հանդուրժող հասարակություն:

Կամավորի անունը. Աստղիկ Գրիգորյան

Նկարագրություն. Իրականացնել տարաբնույթ աշխատանքներ, դասընթացներ և միջոցառումներ տեղի երիտասարդների համար, աջակցել և ներգրավվել հայտնի «Kalabria Eco Fest» փառատոնի կազմակերպչական աշխատանքներում:

When: 27 June - 14 October 2024

Where: Polia, Italy

Hosting organization: KALISTRATIA ODV

Aim: To contribute to environmental protection and create a more inclusive and tolerant society through the capacity development of young people.

Volunteer Name: Astghik Grigoryan

Description: To implement various workshops, trainings and events for the local youth, to support the implementation of the famous festival “Kalabria Eco Fest”.



ԵՅԿ Ուղարկում

ESC Sending

«Կանաչապատիր քո համայնքը 3» “GREEN UP YOUR COMMUNITY 3”

Երբ. 29 փետրվար – 03 օգոստոս 2024 թ.

Որտեղ. Տրամոնտի, Իտալիա

Հյուրընկալող կազմակերպություն. Associazione Costiera Amalfitana Riserva Biosfera (ACARBIO)

Նպատակ. Միանալ տեղական համայնքին, իրականացնել կայուն զարգացմանն ուղղված գործունեություն, ինչպես նաև բարելավել լեզվական կարողությունները և ստեղծել եվրոպական համագործակցության ցանց:

Կամավորի անունը. Եկատերինա Ավագիմյան

Նկարագրություն. Իրականացնել տարաբնույթ աշխատարաններ, դասընթացներ տեղացիների համար՝ կայուն և համաչափ ապրելակերպի վերաբերյալ, երիտասարդների համար կազմակերպել անգլերեն լեզվի դասընթացներ, ինչպես նաև համատեղ ուժերով զբաղվել հարակից կանաչապատ տարածքների մաքրությամբ և հանդես գալ սեփական նախաձեռնություններով:

When: 29 February - 03 August 2024

Where: Tramonti, Italy

Hosting organization: Associazione Costiera Amalfitana Riserva Biosfera (ACARBIO)

Aim: To join the local community, carry out sustainable development activities, as well as improve language skills and build a European network.

Volunteer Name: Yekaterina Avagimyan

Description: To implement various workshops, trainings for the locals about sustainable and green way of life, to teach the English language to the youngsters, as well as to be engaged in the cleaning activities of adjacent green areas together and implement her own initiatives.



ԵՅԿ Ուղարկում

ESC Sending

«Moving forward 3.0»

Երբ. 15 մայիս 2024 թ. – 30 մարտ 2025 թ.

Որտեղ. Բիդգոշ, Լեհաստան

Հյուրընկալող կազմակերպություն. WSG University in Bydgoszcz

Նպատակ. Նպաստել երիտասարդների հմտությունների և կարողությունների զարգացմանը՝ միաժամանակ փոփոխություններ բերելով տարբեր ոլորտներում, ինչպիսիք են միջազգային հարաբերությունները, դիզայն ստուդիան (մարքեթինգի բաժինը), մանկապարտեզը և լուսանկարչությունը:

Կամավորի անունը. Վլադիկ Բագրատյան

Նկարագրություն. Աջակցել թիմին միջազգային ուսանողների համար ինտեգրման, մշակութային և ժամանցային միջոցառումների կազմակերպման գործընթացում, ներգրավվել կազմակերպության մարքեթինգային թիմում, պատրաստել պաստառներ, տեղեկատվական թերթիկներ ԵՅԿ ծրագրերի վերաբերյալ, լուսանկարչական ստուդիայում կազմակերպել ֆոտո ցուցահանդեսներ և տարբեր աշխատարաններ, ինչպես նաև ներկայացնել սեփական մշակույթը:

When: 15 May 2024 – 30 March 2025

Where: Bydgoszcz, Poland

Hosting organization: WSG University in Bydgoszcz

Aim: To contribute to the development of skills and competences among young people while bringing changes in different areas such as international affairs, design studio (marketing department), nursery and photography.

Volunteer Name: Vladik Bagratyan

Description: To support the team with organization of integrative, cultural and entertainment events for international students, to be involved in marketing team of the organization, prepare posters and leaflets on ESC programme, to organize photo exhibitions and various workshops at the photo studio, as well as present his own culture.



ԵՅԿ Մարդասիրական կամավորություն

Humanitarian Aid Volunteering

Մարդասիրական կամավորություն

Նկարագրություն. «Մարդասիրական կամավորություն» ծրագիրն իրականացվում է Եվրամիության Եվրոպական համերաշխության կորպուս ծրագրի շրջանակներում:

Ծրագիրը հնարավորություն է տալիս 18-35 տարեկան երիտասարդներին իրենց ներդրումն ունենալ հասարակության զարգացման մեջ՝ կարճաժամկետ կամ երկարաժամկետ կամավորական գործունեության միջոցով, որոնք ուղղված են կարիքավոր մարդկանց կենսապայմանների բարելավմանը:

Այս ծրագրերը պետք է համահունչ լինեն մարդասիրական օգնության մարդասիրության, չեզոքության, անկողմնակալության և անկախության սկզբունքներին, ինչպես նաև «մի վնասիր» սկզբունքին:

Humanitarian Aid Volunteering

Description: Humanitarian Aid Volunteering is a volunteering programme in the frames of European Solidarity Corps programme of EU.

The programme gives an opportunity to young people aged 18 to 35 years old to contribute to society by short-term or long-term volunteering activities aimed at improving living conditions of people in need.

These projects must be in line with the humanitarian aid principles of humanity, neutrality, impartiality and independence, as well as with the 'do no harm' principle.



«Համայնքների հզորացում կարողությունների զարգացման միջոցով»

“ECSD - Empowering Communities through Skills Development”

Երբ. 21 սեպտեմբեր 2023 թ. – 19 սեպտեմբեր 2024 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Խթանել կամավորությունը, նպաստել կազմակերպության կազմակերպական և աշխատակազմի կարողությունների զարգացմանը:

Կամավորի անունը. Ինգրիդ Ունանդեր-Սկարին (Շվեդիա)

Նկարագրություն. «Համայնքների հզորացում կարողությունների զարգացման միջոցով» ծրագրի շրջանակներում կամավորը ներգրավվել է կազմակերպության ծրագրային թիմում աջակցելով նոր գաղափարների և ծրագրերի մշակման գործընթացին: Կազմակերպության կազմակերպական զարգացման և աշխատակազմի կարողությունների զարգացման նպատակով կամավորի կողմից մշակվել են ֆոնդահայթհայթման և ծրագրերի մշակման կանոնակարգեր: Կամավորը ներգրավվել է նաև «Աշխարհն առաջնորդող աղջիկները» (GLOW) առաջնորդության և հզորացման ճամբարում որպես ծրագրերի մշակման և կառավարման բաղադրիչի պատասխանատու:

When: 21 September 2023 – 19 September 2024

Where: Gyumri, Armenia

Aim: To promote volunteerism, to contribute to the organizational development and staff capacity building of the organization.

Volunteer Name: Ingrid Unander-Scharin (Sweden)

Description: In the frames of the project “ECSD - Empowering Communities through Skills Development” the volunteer was involved in the programmatic team of the organization thus contributing to the development of new projects and ideas. The volunteer also supported the development of regulations and manuals for project development and management, as well as mapping fundraising sources to ensure the organizational development and capacity building of the organization. She also got involved in the “Girls Leading Our World” (GLOW) leadership and empowerment camp as a project design and management coordinator.



«ԱՄՆ Խաղաղության կորպուս»

“U.S. Peace Corps”

Երբ. Մայիս 2023 թ. - Մայիս 2025 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Նպաստել կազմակերպության կազմակերպական զարգացմանը և երիտասարդների հզորացմանը:

Կամավորի անունը. Մարկ Զլենսի (ԱՄՆ)

Նկարագրություն. Կամավորն իր գործունեությամբ աջակցել է կազմակերպական զարգացմանը, ծրագրերի նախագծմանը և իրականացմանը, ներգրավվել է կազմակերպության ընթացիկ ծրագրերում, նպաստել երիտասարդների լեզվական հմտությունների բարելավմանը:

2024 թվականի ընթացքում կամավորի գործունեության արդյունքում ծրագրային առաջարկով դիմվել է «ԱՄՆ Խաղաղության կորպուսի» երիտասարդական ֆոնդին և ստացել ենք ֆինանսավորում: Ծրագրի շրջանակներում «Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի տարածքում տեղադրվել է խեցեգործության շարժական տաղավար, որտեղ երիտասարդների համար անցկացվում են կավագործության աշխատարաններ և վարպետաց դասեր:

When: May 2023 - May 2025

Where: Gyumri, Armenia

Aim: To ensure organizational development and youth empowerment.

Volunteer Name: Marc Clancy (USA)

Description: The volunteer assisted in the organizational development, project writing and implementation phase, got involved in on-going projects of the organization and developed language skills of young people.

As a result of the volunteer's activities during 2024 a project proposal was developed and submitted to the Peace Corps Youth Fund and received funding. Within the framework of the project a mobile pottery studio was installed in the territory of the "Gyumri Youth House" open youth centre, where pottery workshops and master classes are held for young people.



«ԱՄՆ խաղաղության կորպուս»

“U.S. Peace Corps”

Երբ. Մայիս 2023 թ. - Մայիս 2025 թ.

Որտեղ. Արթիկ, Հայաստան

Նպատակ. Նպաստել «Արթիկի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի կազմակերպական զարգացմանը և երիտասարդների հզորացմանը:

Կամավորի անունը. Հարրի Փիրսոն (ԱՄՆ)

Նկարագրություն. Կամավորն իրականացրել է ոչ-ֆորմալ կրթական ակումբներ անգլերենի խոսակցական ակումբի և կիթառի դասընթացների միջոցով՝ նպաստելով երիտասարդների լեզվական և երաժշտական հմտությունների բարելավմանը:



When: May 2023 - May 2025

Where: Artik, Armenia

Aim: To ensure organizational development of “Artik Youth House” open youth centre and youth empowerment.

Volunteer Name: Harry Pearson (USA)

Description: The volunteer planned and ran non-formal educational clubs to develop language and musical skills of young people through English speaking club and guitar classes.



«ԱՄՆ խաղաղության կորպուս»

“U.S. Peace Corps”

Երբ. Մայիս 2024 թ. - Մայիս 2026 թ.

Որտեղ. Գավառ, Զայաստան

Նպատակ. Նպաստել «Գավառի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի կազմակերպական զարգացմանը և երիտասարդների հզորացմանը:

Կամավորի անունը. Բեյթլին Փաուել (ԱՄՆ)

Նկարագրություն. Կամավորն իրականացրել է ոչ-ֆորմալ կրթական ակումբներ, նպաստել երիտասարդների լեզվական հմտությունների բարելավմանը՝ վարելով անգլերեն լեզվի սկսնակ և միջին մակարդակի ակումբներ, աջակցել է ճամբարների, միջոցառումների կազմակերպմանը, անցկացրել աշխատարաններ և դասընթացներ՝ ուղղված երիտասարդների անձնական և մասնագիտական զարգացմանը, ինչպես նաև իրականացրել սեփական նախաձեռնություններ՝ երիտասարդներին ծանոթացնելով ամերիկյան մշակույթի առանձնահատկություններին:



When: May 2023 - May 2025

Where: Artik, Armenia

Aim: To ensure organizational development of “Artik Youth House” open youth centre and youth empowerment.

Volunteer Name: Harry Pearson (USA)

Description: The volunteer planned and ran non-formal educational clubs to develop language and musical skills of young people through English speaking club and guitar classes.



ԵՅԿ Թիմային կամավորություն

Volunteering Teams

«Թիմային կամավորություն՝ բարձր առաջնահերթության ոլորտներում»

Նկարագրություն. Թիմային կամավորությունը բարձր առաջնահերթության ոլորտներում լայնածավալ, մեծ ազդեցություն ունեցող նախագիծ է, որն աջակցում է առնվազն երկու տարբեր երկրներից եկող երիտասարդների կողմից իրականացվող կամավոր աշխատանքը: Ծրագրի շրջանակներում երիտասարդները միավորվում են համերաշխություն քարոզող կարճաժամկետ ծրագրերի շուրջ, որոնք ուղղված են ընդհանուր եվրոպական մարտահրավերների հաղթահարմանը:

Թիմային կամավորությունը հնարավորություն է տալիս 18-30 տարեկան երիտասարդներին իրենց ներդրումն ունենալ հասարակության զարգացման մեջ՝ 2 շաբաթից 2 ամիս տևողությամբ կամավոր աշխատանք իրականացնելու միջոցով:



“Volunteering Teams in High Priority Areas”

Description: Volunteering Teams in High Priority Areas are large-scale, high impact projects supporting voluntary activities carried out by young people from at least two different countries coming together to express solidarity by implementing short-term interventions that address common European challenges.

Volunteering Teams provide an opportunity to young people aged 18 to 30 years old to contribute to society development by short-term volunteering activities for a period between 2 weeks and 2 months.



«Caucas.EU.s - Աջակցություն Կովկասյան տարածաշրջանի խոցելի շահմայնքներին և երիտասարդներին»

“Caucas.EU.s - Support to the vulnerable communities and youth of the Caucasian Region”

Երբ. 06 հունիս - 17 հուլիս 2024 թ., 11 հուլիս - 21 օգոստոս 2024 թ.

Որտեղ. Ռուսթավի, Վրաստան և Գյումրի, Արթիկ, Հայաստան

Նպատակ. Նպաստել համայնքային զարգացմանը, երիտասարդների անձնական և մասնագիտական աճին՝ մշակութային և կրթական ծրագրերի միջոցով:

Գործընկեր երկրներ. Իտալիա, Ֆրանսիա, Ուկրաինա, Վրաստան, Հայաստան

Նկարագրություն. Երկփուլ թիմային կամավորության շրջանակներում Վրաստանում և Հայաստանում 42 օր տևողությամբ հյուրընկալվել են 20-ական կամավորներ՝ 5 տարբեր երկրներից:

Վրաստանում ընթացող ծրագրի ընթացքում կամավորներն աշխատել են Ռուսթավիում և հարակից համայնքներում գործող երիտասարդական կենտրոններում՝ իրականացնելով մշակութային, սպորտային և ժամանցային նախագծեր տեղի երիտասարդների և համայնքի երեխաների համար:

Հայաստանյան փուլի ընթացքում կամավորները հյուրընկալվել են Գյումրի և Արթիկ համայնքներում գործունեություն ծավալելով «Գյումրու երիտասարդների տուն» և «Արթիկի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոններում:

Կամավորները կազմակերպել և իրականացրել են տարաբնույթ աշխատարաններ, մշակութային և ժամանցային ծրագրեր, ներգրավվել կենտրոններում իրականացվող բակային ճամբարի կազմակերպչական աշխատանքներում, ինչպես նաև երիտասարդության միջազգային օրվան նվիրված միջոցառումներում, որոնք տեղի են ունեցել Գյումրի, Գավառ, Վաղարշապատ համայնքներում:

When: 06 June - 17 July 2024, 11 July - 21 August 2024

Where: Rustavi, Georgia, Gyumri, Artik, Armenia

Aim: To contribute to community development, personal and professional growth of young people through cultural and educational activities.

Partner countries: Italy, France, Ukraine, Georgia, Armenia

Description: As part of a two-phase Volunteering teams project, groups of 20 volunteers each from 5 different countries were hosted in Georgia and Armenia for a duration of 42 days.

In Georgia, within the framework of the project, the volunteers worked in youth centres located in Rustavi and surrounding communities implementing cultural, sports and entertainment activities for local youth and children.

During the Armenian phase, the volunteers were hosted in Gyumri and Artik, carrying out their activities at the "Gyumri Youth House" and "Artik Youth House" open youth centres. They planned and implemented various workshops, cultural and entertainment activities, got involved in the organization of the summer camp in Gyumri, as well as took part in events dedicated to International Youth Day in the communities of Gyumri, Gavar, and Vagharshapat.



«Taith» միջազգային կամավորություն

“Taith” International Volunteering

Երբ. 24 հունիս – 31 օգոստոս 2024 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Խթանել միջազգային կրթական հնարավորությունները կամավորության և միջմշակութային հաղորդակցության միջոցով:

Կամավորի անունը. Ջեք Ուիլսոն (Ուելս, Միացյալ Թագավորություն)

Նկարագրություն. Պլանավորել, նախապատրաստել և անցկացնել ոչ ֆորմալ կրթական աշխատարաններ, անգլերեն լեզվի ակումբներ, մշակութային միջոցառումներ ԵՆԿ ՀԿ-ի «Արմավիրի երիտասարդների տուն» և «Էջմիածնի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնների սաների համար:

When: 24 June - 31 August 2024

Where: Gyumri, Armenia

Aim: To promote international learning opportunities through volunteering and intercultural communication.

Volunteer Name: Jack Wilson (Wales, United Kingdom)

Description: To plan, prepare and conduct non-formal educational workshops, the English language classes and cultural events for the beneficiaries of “Armavir Youth House” and “Ejmiatsin Youth House” open youth centres of YIC NGO.



«Դեպի Հայք»

“Birthright Armenia”

Նպատակ. Զարգացնել և ամրապնդել հայրենիքի ու Սփյուռքի երիտասարդների միջև կապերը՝ վերջիններին հնարավորություն տալով մասնակցել Հայաստանի առօրյա կյանքին և ներդրում ունենալ հայրենիքի զարգացմանը կամավորական աշխատանքի միջոցով, միաժամանակ բարձրացնել Սփյուռքի երիտասարդների ազգային ինքնագիտակցությունը:

Aim: To strengthen ties between the homeland and youth from diaspora, by affording them an opportunity to be a part of Armenia's daily life and to contribute to Armenia's development through work, study and volunteer experiences, while developing life-long personal ties and a renewed sense of Armenian identity.

Երբ. 27 փետրվար - 07 ապրիլ 2024 թ.

When: 27 February - 07 April 2024

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Where: Gyumri, Armenia

Կամավորի անունը. Սերոբ Ռուստիկյան (ԱՄՆ)

Volunteer Name: Serob Rustikyan (USA)

Նկարագրություն. Կամավորը պլանավորել, նախապատրաստել և անցկացրել է «Կենսաքիմիա», «Աշխարհագրություն», «Ֆիզիկական փորձեր», «Համաշխարհային աշխարհագրություն», «Կանաչ գիտության մեջ» թեմաներով աշխատարաններ «Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի սաների համար:

Description: The volunteer planned, prepared and conducted workshops for the beneficiaries of the “Gyumri Youth House” open youth centre on the topics of “Biochemistry”, “Geography”, “Physical Experiments”, “World Geography” and “Women in Science”.



ԵՅԿ մենթորների տեղական ներածական դասընթաց

“Local introductory training for ESC mentors”

Երբ. 20 ապրիլ 2024 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Բարելավել Եվրոպական միության «Եվրոպական համերաշխության կորպուս» (ԵՅԿ) ծրագրի կամավորական ծրագրերում ներգրավված երիտասարդների գիտելիքները՝ նպաստելով կամավորական ծրագրեր հյուրընկալող կազմակերպությունների ներուժի զարգացմանը և ԵՅԿ ծրագրերի որակի բարձրացմանը:

Նկարագրություն. Հայաստանում «Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրերի տեղեկատվական կենտրոնը ապրիլի 20-ին Գյումրիում իրականացրեց Եվրամիության «Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրի մենթորների մեկօրյա տեղական ներածական դասընթաց: Դասընթացի շրջանակներում ՀՀ տարբեր համայնքների երիտասարդներ և երիտասարդական կառույցների ներկայացուցիչներ հնարավորություն ունեցան ավելի մանրամասն ծանոթանալու «Եվրոպական համերաշխության կորպուս» կամավորական ծրագրին, ընձեռվող հնարավորություններին, ինչպես նաև բացահայտեցին ԵՅԿ կամավորներին աջակցելու և ուղղորդելու համար անհրաժեշտ կարևոր մեթոդներ, որոնք կօգնեն սրանց կայանալ որպես որակյալ մենթորներ:

Հանդիպման ավարտին մասնակիցներին հանձնվեցին վկայականներ:

When: 20 April 2024

Where: Gyumri, Armenia

Aim: To improve the knowledge of young people involved in the European Solidarity Corps programme by contributing to the development of the potential of host organizations implementing ESC projects and increasing the quality of the latter.

Description: On the 20th of April the Info Centre for Erasmus+ Youth and European Solidarity Corps programmes in Armenia held a 1-day local introductory training course on ESC mentorship in Gyumri. In the frames of the training course young people and representatives of youth organizations from different cities of Armenia had an opportunity to learn more about ESC programme, the opportunities the latter provides as well as to discover vital methods and tools to support and guide the volunteers towards the development of their competences and become qualified mentors.

The participants received certificates of participation at the end of the training.



«ԵՄ-ն՝ հանուն երիտասարդների շրջանավարտների ցանց» 4

EU4Youth Alumni network” 4

Երբ. Մարտ – Հոկտեմբեր 2024 թ.

Որտեղ. Հայաստան

Նպատակ. Մոբիլիզացնել ԵՄ տարբեր երիտասարդական ծրագրերին մասնակցած երիտասարդներին, պահպանել նրանց ոգևորությունը և մոտիվացիան, ինչպես նաև վերջիններին կապել իրենց համայնքների սահմանափակ հնարավորություններով երիտասարդների հետ՝ նրանց ակտիվացնելու և ԵՄ շարժունակության տարբեր ծրագրերում ներգրավելու նպատակով:

Նկարագրություն. «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն, Հայաստանում «Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրերի տեղեկատվական կենտրոնի շրջանակներում, համակարգել է «ԵՄ-ն՝ հանուն երիտասարդների շրջանավարտների ցանց»-ի հայաստանյան ծրագրի չորրորդ փուլը: Ծրագիրն իրականացվել է EU4Youth Coordination and Support-ի կողմից Արևելյան գործընկերության 5 երկրներում (Հայաստան, Ադրբեջան, Մոլդովա, Վրաստան, Ուկրաինա):

«ԵՄ-ն՝ հանուն երիտասարդների շրջանավարտների ցանց» ծրագիրը համախմբել է 60 երիտասարդների ցանցի ծրագրերի տեղեկատվական երկրներից (յուրաքանչյուր երկրից 12 ներկայացուցիչ), ովքեր իրենց հերթին աշխատել են տեղի երիտասարդների և դեռահասների հետ՝ ուղղորդելով վերջիններին և իրականացնելով տեղական համայնքային նախաձեռնություններ:

2024 թվականի ընթացքում ցանցի անդամներն իրականացրել են երիտասարդների կարողությունների զարգացմանը, մասնագիտական կողմնորոշմանը, ոչ-ֆորմալ կրթությանը, քաղաքացիական ակտիվության խթանմանը, փափուկ և լեզվական հմտությունների զարգացմանն ուղղված տարբեր նախաձեռնություններ նախաձեռնություններ իրականացվել են Դսեղ, Հոբարձի, Վարդաբլուր, Էջմիածին, Այգեզարդ, Գավառ համայնքներում:



When: March – October 2024

Where: Armenia

Description: In 2024, YIC NGO expanded the cooperation with various international partners by providing a wide range of capacity development opportunities to young people and youth workers throughout Armenia. In the result, 45 individuals from the mentioned groups had the chance of participating in mobility projects within the framework of the European Union Erasmus+ programme. In 2024, YIC also hosted 1 international mobility project in Armenia with 24 participants - 2 from Armenia and 22 from other countries.

These projects covered such topics as youth work and non-formal education, leadership, environment, music and intercultural communication, inclusion and human rights, gender equality, digital and media literacy.



Կամավորների դպրոց

Volunteers' School

Երբ. Մայիս - Նոյեմբեր 2024 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Խթանել կամավորության մշակույթը և բարձրացնել երիտասարդների ներգրավվածությունը համայնքային կյանքում գիտելիքների և հիմնարար հմտությունների զարգացման ու գործնական փորձի ձեռքբերման միջոցով:

Նկարագրություն. 2024 թվականից «Երիտասարդական Նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն իրականացնում է Նոր ծրագիր՝ «Կամավորների դպրոց»-ը, որին մասնակցում էին 16-24 տարեկան տասնհինգ երիտասարդներ Գյումրիից և Շիրակի մարզի տարբեր բնակավայրերից:

Վեց ամիսների ընթացքում կամավորները մասնակցել են տեսական և գործնական հանդիպումների՝ ուսումնասիրելով հետևյալ թեմաները՝

- «Ինչ է կամավորությունը»,
- «Ինչ է երիտասարդական աշխատանքը. Նպատակներ, հիմնական ձևաչափեր և թիրախներ»,
- «Կոնֆլիկտները գործնական հարաբերություններում»,
- «Հաղորդակցման հմտություններ»,
- «Հանրային կապեր և սոցիալական մեդիայի կառավարման առանձնահատկություններ»,
- «Ինչպես կազմել գրագետ ինքնակենսագրական և մոտիվացիոն նամակ»,
- «Թվային գրագիտություն»:

Մասնակիցների կողմից իրականացված նախաձեռնություններից են եղել երիտասարդների մասնակցությամբ «Քաղաքային քվեստ»-ը, «Բաց դռների օր»-ը ԵՆԿ-ում, տեղեկատվական հանդիպումները ՀԿՏՀ Գյումրու մասնաճյուղի և Գյումրու թիվ 3 արհեստագործական պետական ուսումնարանի ուսանողների հետ և այլն: Մասնակիցները հնարավորություն են ունեցել կամավոր աշխատանք իրականացնել ԵՆԿ-ի կողմից իրականացված տարբեր միջոցառումների և ծրագրերի ժամանակ՝ հարստացնելով իրենց փորձը, գիտելիքներն ու հմտությունները: «Կամավորների դպրոց»-ի ավարտին մասնակիցները ստացան ավարտական վկայականներ:



When: May – November 2024

Where: Gyumri, Armenia

Aim: The goal of the Youth Initiative's Volunteers' School is promote a culture of volunteerism and increase youth engagement in civic life. Through this program, youth will develop critical competencies in collaborative teamwork, leadership development, personal growth and social program implementation. Beyond skill building, participants will gain hands-on understanding of volunteering values through direct experience, showcasing their knowledge, commitment and abilities in community service and cooperation efforts.

Description: In 2024 the "Youth Initiative Centre" NGO implemented a new program called the "Volunteers' School."

Over the course of six months, youth participated in theoretical and practical workshops exploring the following topics:

- Conflict resolution in professional settings
- Communication skills
- How to create a well-written CV and motivation letter
- Volunteerism as a civic concept
- Public relations and social media management
- Project development and team organization
- Digital literacy

In addition to capacity building workshops, participants engaged in informational visits to the Gyumri branch of the National Polytechnic University of Armenia and Gyumri Vocational School No. 3. These visits were followed by a "City Quest" and an "Open Door" day, which took place at the YIC NGO office on October 18. The program was attended by fifteen young people aged 16 to 24. At the close of the school, the volunteers received certificates of completion.



«Երիտասարդության միջազգային օր 2024»

“International Youth Day 2024”

Երբ. 11, 12, 13 օգոստոս 2024 թ.

Որտեղ. Գյումրի, Գավառ, Վաղարշապատ, Հայաստան

Նկարագրություն. «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն, շարունակելով երիտասարդության միջազգային օրը մեծ տոնախմբությամբ նշելու գեղեցիկ ավանդույթը, 2024 թվականի միջոցառումներն անցկացրել է երեք տարբեր քաղաքներում օգոստոսի 11-ին Գյումրիում, օգոստոսի 12-ին Գավառում որպես ՀՀ երիտասարդական մայրաքաղաք, և օգոստոսի 13-ին Վաղարշապատում:

Երիտասարդության միջազգային օրվան ընդառաջ՝ իրականացվեց մեդիա արշավ սոցիալական մեդիայում տեսանյութերի, տարբեր հրապարակումների միջոցով, ինչպես նաև իրագրված արշավ Գյումրիում թռուցիկների, տեղեկատվական նյութերի տարածման միջոցով:

Գյումրիում օգոստոսի 11-ին երիտասարդության միջազգային օրվան նվիրված միջոցառումները մեկնարկեցին Արուսյան փողոցում տեղադրված «ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԶԱՂԱՔ» խորագրով թեմատիկ կանգառներով, որոնցում միաժամանակ տեղի ունեցան տարաբնույթ աշխատարան-գործողություններ: Օրվա թեմատիկ կանգառներն էին Թվային գործիքների, Միջմշակութային, Էրազմուս+ երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորպուս (ԵՀԿ) ծրագրերի, ՀԵԾՕՆերի, ԱՆԾԻԿթերսի, Չժխկալու, Գրկախառնության, Ինքնախնամքի և Թատերական կանգառները:

When: 11, 12, 13 August 2024

Where: Gyumri, Gavar, Vagharshapat, Armenia

Description: Continuing the beautiful tradition of celebrating International Youth Day with a big, remarkable celebration, in 2024 "Youth Initiative Centre" NGO held various public events in 3 different cities of Armenia: in Gyumri on the 11th of August, in Gavar on the 12th of August as the Youth Capital of Armenia in 2024, and in Vagharshapat on the 13th of August.

Prior to the International Youth Day events Social Media and Public Awareness Campaign was organized in Gyumri. A media campaign was carried out on social media through videos, various publications, as well as an awareness raising campaign in Gyumri to spread information about the events through the distribution of flyers and informational materials.

On the 11th of August in Gyumri the events dedicated to the International Youth Day launched in Abovyan street with thematic stations entitled "THE CITY OF YOUTH", where various workshop-activities took place simultaneously. The thematic stations were as follows: Digital, Intercultural, Erasmus+ Youth and European Solidarity Corps programmes, Bike, Antistress, Photo, Hugging, Self-care and Theatre stations.



Երիտասարդության միջազգային օրվա շրջանակներում Հայաստանում «Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորպուս ծրագրերի» տեղեկատվական կենտրոնը, ՍԱԼՏՈ Արևելյան Եվրոպա և Կովկաս ռեսուրսային կենտրոնի և «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համատեղ, օգոստոսի 10-12-ը Գյումրիում հյուրընկալեց նաև Եվրամիության «Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրի կամավորների տարեկան գնահատման հանդիպումը:

Արվյան փողոցում, շարունակելով երիտասարդության միջազգային օրվան նվիրված միջոցառումների շարքը, Գյումրիում հյուրընկալված մասնակիցները ներկայացրեցին ԵՀԿ ծրագրի կողմից երիտասարդներին ընձեռվող հնարավորությունները, ինչպես նաև անցկացվեց «Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրի վերաբերյալ խաղարկություն, որի արդյունքում հաղթողները ստացան մրցանակներ:

Միջոցառումը շարունակվեց բացօթյա համերգով, որի ընթացքում ելույթ ունեցավ «YereOne Project» բենդը, իսկ երեկոն եզրափակեց «DJ MILL»-ը:

Միջոցառումն իրականացրեց «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն՝ Գյումրու համայնքապետարանի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի, ՅՈՒՆԻՍԵֆ-ի հայաստանյան գրասենյակների, ՍԱԼՏՈ Արևելյան Եվրոպա և Կովկաս ռեսուրսային կենտրոնի, Հայաստանում «Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական Համերաշխության Կորպուս» ծրագրերի տեղեկատվական կենտրոնի հետ համատեղ:



Within the framework of the International Youth Day, the Info Centre for Erasmus+ Youth and European Solidarity Corps Programmes in Armenia in cooperation with SALTO Eastern Europe and Caucasus Resource Centre and Youth Initiative Centre NGO, also hosted the annual evaluation meeting of European Solidarity Corps volunteers from 10 to 12 of August in Gyumri.

Continuing the series of events dedicated to the International Youth Day the opportunities provided by the European Solidarity Corps programme were presented to the young people by the participants of ESC annual volunteering event, as well as a quiz on European Solidarity Corps programme was held as a result of which the winners got prizes.

Public events ended with an open-air concert, during which "YereOne Project" band performed, then "DJ MILL" continued the evening with wonderful vibes.

The event was organised by "Youth Initiative Centre" NGO in cooperation with Gyumri Municipality, UN Population Fund Armenia (UNFPA), UNICEF, SALTO Eastern Europe and Caucasus Resource Centre and the Info Centre for "Erasmus+ Youth and European Solidarity Corps" Programmes in Armenia.





«Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրերի Տեղեկատվական կենտրոնն Հայաստանում

Info Centre for Erasmus+ Youth and European Solidarity Corps Programmes in Armenia

Երբ. 01 հունվար – 31 դեկտեմբեր 2024 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Տրամադրել տեղեկատվություն և խորհրդատվություն երիտասարդներին և երիտասարդական կառույցներին՝ Հայաստանում Եվրամիության «Էրազմուս+ Երիտասարդություն» և «Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրերի ընձեռած հնարավորությունների վերաբերյալ, ինչպես նաև աջակցել շահագրգիռ կողմերին իրենց ծրագրերի իրականացման գործում:

Նկարագրություն. «Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրերի տեղեկատվական կենտրոնների ցանցը ստեղծվել է 2017 թ., որը գործում է Արևելյան գործընկերության 6 երկրներում՝ Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում, Ուկրաինայում, Մոլդովայում, Բելառուսում: Կենտրոնների գործունեության համակարգման իրավասությունը մրցութային կարգով ստանձնում է յուրաքանչյուր երկրի մեկ կազմակերպություն:

Հայաստանում «Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրերի տեղեկատվական կենտրոնի գործունեության համակարգման լիազորությունը արդեն ութերորդ տարին հանձնվել է «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՅԿ-ին:

Տեղեկատվական կենտրոնի թիրախային խմբերն են երիտասարդները, երիտասարդական կազմակերպությունները, երիտասարդական աշխատողները, երիտասարդական քաղաքականություն իրականացնողները և այլ ինստիտուցիոնալ, շահագրգիռ կողմերը:

Տեղեկատվական կենտրոնը տրամադրում է առցանց և հեռախոսային խորհրդատվություն, ինչպես նաև կազմակերպում է տեղեկատվական օրեր, առերես հանդիպումներ և բաց դռների օրեր:

When: 1 January – 31 December 2024

Where: Gyumri, Armenia

Aim: To provide information on opportunities for young people and youth organizations within the “Erasmus+ Youth” and “European Solidarity Corps” programmes and support stakeholders in implementation of their projects.

Description: The Network of Info Centres for “Erasmus+ Youth and European Solidarity Corps Programmes” has been established in 2017. The Info Centres are functioning in six Eastern Partnership countries (Armenia, Georgia, Azerbaijan, Ukraine, Moldova, Belarus). The coordination of activities of the Info Centres is carried out by a single organization selected from each partner country on the basis of the open call.

“Youth Initiative Centre” (YIC) NGO is in charge of coordination of activities of the Info Centre in Armenia already in its eighth year.

The target groups of the Info Centre are young people, youth organizations, youth workers, youth policy makers and other institutional stakeholders.

The Info Centre provides on-line and phone consultancy, as well as organizes face to face meetings, info days and open doors.



«Եվրոպան տեղայնացվում է»

“Europe Goes Local”

Երբ. Օգոստոս 2022 թ. - Դեկտեմբեր 2027 թ.

Որտեղ. Շիրակ, Լոռի, Արմավիր, Գեղարքունիք, Սյունիք, Հայաստան

Նպատակ. Նպաստել եվրոպական ընդգրկումն ցանցի ստեղծմանը և միջազգային համագործակցության հաստատմանը Եվրոպական միության ու Արևելյան գործընկերության երկրների համայնքապետարանների, տեղական երիտասարդական հասարակական, հովանոցային կազմակերպությունների և անհատ փորձագետների միջև:

Նկարագրություն. «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն, ՍԱԼՏՈ Արևելյան Եվրոպա և Կովկաս ռեսուրսային կենտրոնի հետ համատեղ, Հայաստանում «Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրերի տեղեկատվական կենտրոնի շրջանակներում իրականացնում է Եվրոպական միության «Եվրոպան տեղայնացվում է» ծրագիրը Հայաստանի տարբեր մարզերում:

«Եվրոպան տեղայնացվում է» ծրագիրը ռազմավարական գործընկերություն է, որի մեջ ներկայումս ներգրավված են ՍԱԼՏՈ ռեսուրսային կենտրոններ, Եվրամիության Էրազմուս+ ծրագրի 27 ազգային գործակալություններ և վերջիններիս շուրջ 200 համայնքային գործընկերներ:

2021 թվականից «Եվրոպան տեղայնացվում է» ծրագիրը հասանելի է դարձել նաև Եվրամիությանը հարակից գործընկեր երկրների համար՝ ՍԱԼՏՈ ռեսուրսային կենտրոնների ներգրավմամբ՝ «Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորպուս ծրագրերի» տեղեկատվական կենտրոնների աջակցությամբ:

2022 թվականից Հայաստանից «Եվրոպան տեղայնացվում է» ցանցին են միացել Շիրակի, Լոռու, Արմավիրի և Գեղարքունիքի մարզերի Գյումրի, Սպիտակ, Արմավիր, Էջմիածին, Խոյ և Գավառ համայնքների համայնքապետարանները:

Որպես «Եվրոպան տեղայնացվում է» երկարաժամկետ ծրագրի բաղադրիչ արդեն երկրորդ տարին իրականացվում է «Եվրոպան տեղայնացվում է. Մենթորության նախագիծ Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Մոլդովայի համար» ծրագիրը, որի նպատակն է զինել համայնքապետարանների ներկայացուցիչներին համապատասխան գիտելիքներով և փորձով իրենց համայնքներում երիտասարդական աշխատանքի ռազմավարության մշակման, երիտասարդական ծրագրերի իրականացման և երիտասարդական աշխատանքի եվրոպական փորձի տեղայնացման նպատակով: 2024 թվականին «Մենթորության» ծրագրի երկրորդ փուլում Հայաստանից ներգրավվել են Էջմիածին, Խոյ, Տաթև և Գավառ համայնքները: Ծրագրի ընթացքում ներգրավված համայնքների ներկայացուցիչները մենթորի աջակցությամբ մշակել են իրենց աշխատանքային պլանները, մասնակցել կարողությունների զարգացման դասընթացներին և ուսումնական այցերին, որոնք տեղի են ունեցել Լեհաստանում ու Վրաստանում:

When: August 2022 - December 2027

Where: Shirak, Lori, Armavir, Gegharkunik, Syunik, Armenia

Aim: To contribute to the creation of the European network and development of international cooperation between the municipalities, youth NGOs, umbrella organizations and individual experts from the EU and Eastern Partnership countries.

Description: “Youth Initiative Centre” NGO in cooperation with SALTO Eastern Europe and Caucasus Resource Centre implements a long-term project of the EU “Europe Goes Local” in different regions of the RA in the frames of the Info Centre for Erasmus+ Youth and European Solidarity Corps Programmes in Armenia.

“Europe Goes Local” is a strategic partnership which involves SALTO Resource Centres, 27 National Agencies of the European Union’s Erasmus+ programme and about 200 of their municipal partners.

Starting from 2021 “Europe Goes Local” project is available for partner countries neighboring the EU with the involvement of SALTO Resource Centres and assistance of the Info Centres for Erasmus+ Youth and European Solidarity Corps Programmes.

Since 2022 from Armenia the municipalities of Gyumri, Spitak, Armavir, Ejmiatsin, Khoy and Gavar communities of Shirak, Lori, Armavir and Gegharkunik regions have joined the network.

As one of the components of the “Europe Goes Local” long-term project, already the second year “Europe Goes Local - Mentorship programme for the countries of Armenia, Georgia, Azerbaijan and Moldova” is being implemented. The aim of the programme is to equip municipality representatives with appropriate knowledge and experience to develop youth work strategies in their communities, implement youth projects in line with the European Youth Work Agenda and from the perspective of municipalities and of local youth work actors.

In 2024 Ejmiatsin, Khoy, Tatev and Gavar communities from Armenia were involved in the second phase of the “Mentorship” programme. In the frames of the programme the representatives of involved communities developed their work plans with the support of the mentor, participated in capacity building trainings and study visits in Poland and Georgia.



«3Levels UP in Erasmus+» միջազգային դասընթաց

“3Levels UP in Erasmus+” International Training Course

Երբ. 12 - 20 Յունիս 2024 թ.

Որտեղ. Դիլիջան, Հայաստան

Նպատակ. Զարգացնել երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների՝ որակյալ նախագծերի մշակման, կառավարման, մշտադիտարկման և գնահատման հմտությունները, մասնավորապես՝ «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում:

Նկարագրություն. «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն, ֆրանսիական «Nouveau Départ» ՀԿ-ի հետ համատեղ, հունիսի 12-20-ը Դիլիջանում անցկացրեց «3Levels UP in Erasmus+» խորագրով դասընթացը՝ Եվրամիության «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում: Դասընթացը նվիրված էր ծրագրերի մշակման և կառավարման հմտությունների զարգացմանը:

Ծրագրին մասնակցում էին երիտասարդական ոլորտի 24 ներկայացուցիչներ Հայաստանից, Ֆրանսիայից, Էստոնիայից, Բուլղարիայից, Լիտվայից, Ղրղզստանից, Ավստրիայից, Մոլդովայից, Իտալիայից, Թունիսից, Վրաստանից և Ուկրաինայից: Մասնակիցների թվում կային ծրագրի ղեկավարներ, շարժունակության ծրագրերի համակարգողներ, երիտասարդական աշխատողներ, ԵՀԿ ծրագրերի համակարգողներ և Էրազմուս+ ծրագրում ներգրավված նորեկներ: Մասնակիցները ներկայացրին իրենց երկրներում երիտասարդական աշխատանքի հնարավորություններն ու կարիքները, ծանոթացան ծրագրի մշակման և կառավարման առանձնահատկություններին, ոչ-ֆորմալ կրթության որակի ապահովմանը, սոցիալական ազդեցության, մոնիթորինգի և գնահատման գործիքներին, ինչպես նաև կատարեցին ուսումնական այցեր և ունեցան հնարավորություն կիսվելու հաջողված փորձով և հաստատելու համագործակցային կապեր:



When: 12 - 20 June 2024

Where: Dilijan, Armenia

Aim: To develop competences of project managers on how to structurally design educational activities within KA1 projects of Erasmus+ programme by focusing on the aspects of its quality, monitoring, learning and evaluation.

Description: “Youth Initiative Centre” NGO in cooperation with “Nouveau Départ” (France) NGO hosted an international training course “3Levels UP in Erasmus+” on project design and management in the framework of “Erasmus+” programme from 12th to 20th of June, 2024 in Dilijan, Armenia.

The training course was attended by 24 representatives of the youth field, project managers, mobility project coordinators, youth workers, ESC coordinators and newcomers in Erasmus+ project from Armenia, France, Estonia, Bulgaria, Lithuania, Greece, Austria, Moldova, Italy, Tunisia, Georgia and Ukraine.

The participants presented needs and realities of youth work in their regions, got acquainted with essentials of project design and management, quality in learning mobilities and non-formal education, learned about social impact, monitoring and evaluation tools, as well as had field visits and an opportunity to share good practices and set up partnerships.



«Երիտասարդ քաղաքացիները գործում են. Երիտասարդները որպես տեղական ժողովրդավարության ջատագովներ և ակտիվիստներ»

Youth Citizens Act: Young People as Advocates and Activists in Local Democracy

Երբ. 01 մայիս - 30 նոյեմբեր 2024 թ.

Որտեղ. Արմավիր, Գեղարքունիք, Լոռի, Շիրակ, Հայաստան

Նպատակ. Խթանել երիտասարդների իմաստավոր մասնակցությունը տեղական ժողովրդավարական գործընթացներին այն հարցերի շուրջ, որոնք անմիջականորեն ազդում են նրանց վրա:

Նկարագրություն. Ծրագիրը բաղկացած էր երկու հիմնական փուլերից՝

- 1 Երիտասարդական աշխատողների վերապատրաստում,
- 2 Համայնքային երիտասարդական խմբերի ձևավորում և երկխոսության ձևավորում որոշում կայացնողների հետ:

Հունիսի 3-5-ը Գյումրիում անցկացվեց երիտասարդական աշխատողների վերապատրաստումը, որին մասնակցեցին 18 երիտասարդական աշխատողներ թիրախային մարզերից: Դասընթացի ավարտին փակ մրցույթի արդյունքում ընտրվեցին 6 երիտասարդական աշխատողներ, ովքեր իրենց համայնքներում (Արթիկ, Արմավիր, Գավառ, Գյումրի, Սպիտակ, Վաղարշապատ) ձևավորեցին 13-15 հոգանոց երիտասարդական թիմեր:

Ընտրված երիտասարդական աշխատողները հուլիսից նոյեմբեր ամիսներին անցկացրեցին չորս աշխատարաններ՝ ՏԻՄ-ի, երիտասարդների մասնակցության, շահերի պաշտպանության և քարոզարշավի ձևավորման թեմաներով: Աշխատարաններից հետո կազմակերպվել են այցեր համայնքապետարաններ, այնուհետև երիտասարդներն իրենց համայնքներում իրականացրել են հարցումներ և խնդիրների քարտեզագրում: Շահագրգիռ կողմերի հետ հանդիպումների արդյունքում ընտրել են երիտասարդներին ամենաշատը հուզող 1-2 խնդիր, որի շուրջ սկսել են կառուցել իրենց տեղեկատվական արշավներն ու հանդիպումները որոշում կայացնողների հետ: Բոլոր համայնքներում իրականացվել են հանրային միջոցառումներ:



When: 01 May 2024 - 30 November 2024

Where: Armavir, Gegharkunik, Lori, Shirak, Armenia

Aim: The project aimed to promote meaningful youth participation in democratic processes at the local level on matters that directly affect them.

Description: The project consisted of two main phases:

- 1 Training of youth workers,
- 2 Formation of community youth groups and dialogue with decision-makers.

From June 3 to 5, a youth worker training was held in Gyumri, bringing together 18 youth workers from the targeted regions. Following a closed selection process, 6 youth workers were chosen to form youth teams of 13-15 participants in their respective communities (Artik, Armavir, Gavar, Gyumri, Spitak, and Vagharshapat). From July to November, the selected youth workers led four workshops on the topics of local government, youth participation, advocacy, and campaign design. After the workshops, community visits were organized to local authorities. The young participants then conducted surveys and problem mapping in their communities. They met with stakeholders and identified 1-2 key issues that mattered most to the youth, around which they began to build informational campaigns and organize meetings with decision-makers. Public events were held in each community:



Գյումրիում գետնանցումի մաքրում և տեղեկատվական հոլովակների պատրաստում, Սպիտակում ֆիլմի դիտում, Գավառում պանելային քննարկում, Արթիկում համայնքապատկան տարածքի մաքրում, Արմավիրում տեղեկատվական հանրային միջոցառում, Վաղարշապատում ծառատունկ: Բոլոր համայնքներում հնարավոր է եղել արդյունավետ համագործակցություն ձևավորել ՏԻՄ ներկայացուցիչների և երիտասարդների միջև:

Նոյեմբերի 30-ին Գավառում տեղի ունեցավ ծրագրի ամփոփիչ միջոցառումը, որին հրավիրված էին վերոնշյալ համայնքների ՏԻՄ-երի ներկայացուցիչներ, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և դպրոցների ներկայացուցիչներ: Միջոցառման ժամանակ ներկայացվեցին ամիսների ընթացքում իրականացված գործողություններն ու միջոցառումները, ինչպես նաև երիտասարդները կիսվեցին իրենց հաջողության պատմություններով:

In Gyumri – cleaning the underpass and creating informational videos; in Spitak – a film screening; in Gavar – a panel discussion; in Artik – community area clean-up; in Armavir – an informational public event; and in Vagharshapat – tree planting. In all communities, strong and effective cooperation was established between young people and local government representatives. The project's final event took place on November 30 in Gavar. It brought together representatives of local governments from the participating communities, as well as members of civil society organizations and schools. During the event, the activities and accomplishments of the past months were presented, and young participants shared their success stories.



«ՏԻՄ և ԶԻԿ Ներկայացուցիչների կարողությունների զարգացում երիտասարդական միջավայրի ձևավորման, երիտասարդական քաղաքականության իրականացման, երիտասարդական աշխատանքի կազմակերպման և համայնքային երիտասարդական ծառայությունների տրամադրման վերաբերյալ»

"Capacity Development of Local Government and CSO Representatives in Forming a Youth Environment, Implementing Youth Policy, Organizing Youth Work and Providing Community Youth Services"

Երբ. Հոկտեմբեր 2024 թ. - Հուլիս 2025 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Նպաստել երիտասարդական միջավայրի ձևավորմանը և համայնքային երիտասարդական ծառայությունների ստեղծմանը Հայաստանում տեղական ինքնակառավարման մարմինների ու քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների կարողությունների զարգացման միջոցով:

Նկարագրություն. Ծրագրի շրջանակներում իրականացվել են վերապատրաստման դասընթացներ Գյումրիում ՀՀ տարբեր մարզերից ընդգրկված ՏԻՄ և ԶԻԿ ներկայացուցիչների համար: Դասընթացներն անցկացվել են երկու խմբով: Մասնակիցները եղել են հետևյալ համայնքների՝ Թալին, Ամասիա, Փամբակ, Ստեփանավան, Մեծամոր, Արտաշատ, Հրազդան, Նաիրի, Սևան, Նոյեմբերյան, Ջերմուկ, Գորիս, Քաջարան և Տաթև:

Վերապատրաստման ընթացքում մասնակիցները հնարավորություն են ունեցել ուսումնասիրել հետևյալ թեմաները՝

- Երիտասարդական քաղաքականության սահմանում, նպատակներ, սկզբունքներ,
- Երիտասարդական աշխատանքի պատմություն, զարգացման փուլեր, նպատակներ, սկզբունքներ, թիրախ, տեսակներ և ձևաչափեր,
- Երիտասարդական միջավայրի ձևավորում և համայնքային երիտասարդական ծառայությունների տրամադրում,
- Սոցիալական ձեռներեցությունը երիտասարդական աշխատանքի համատեքստում,
- Ինչպես նաև ծանոթանալ երիտասարդական կենտրոնների ստեղծման նպատակով ԿԳՄՍՆ-ի կողմից դրամաշնորհային ծրագրի հայտի լրացման և հաշվետվությունների ներկայացման կարգին:

Վերապատրաստումն ամփոփվեց դեպի «Արթիկի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոն և Ապարանի «Ալտերալաբ» երիտասարդական կենտրոն կատարված ճանաչողական այցերով, որտեղ մասնակիցները գործնականում բարելավեցին իրենց գիտելիքները երիտասարդական կենտրոնների գործարկման և երիտասարդական աշխատանքի որակյալ ծառայությունների տրամադրման վերաբերյալ:



When: October 2024 - July 2025

Where: Gyumri, Armenia

Aim: To contribute to the formation of a youth environment and the creation of community youth services in Armenia through capacity development of representatives of local self-government bodies and civil society organizations.

Description: The training was held in Gyumri, for representatives of local governments and CSOs from 14 communities selected through a competitive process from different regions of the Republic of Armenia, in two groups. The participating communities were: Talin, Amasia, Pambak, Stepanavan, Metsamor, Artashat, Hrazdan, Nairi, Sevan, Noyemberyan, Jermuk, Goris, Qajaran and Tatev.

During the training, the participants had the opportunity to study the following topics:

- Definition of youth policy, goals, principles,
- History of youth work, development stages, goals, principles, targets, types and formats,
- Formation of youth environment and provision of community youth services,
- Social entrepreneurship in the context of youth work,
- As well as to get acquainted with the procedure for filling out an application and submitting reports for the grant program for the establishment of youth centres by the Ministry of Education, Science, Culture and Sport of the Republic of Armenia for the purpose of establishing youth centres.

The training was concluded with study visits to the "Artik Youth House" open youth centre and Aparan "Alteralab" youth centre, where participants practically improved their knowledge on the operation of youth centres and the provision of quality youth work services.



Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» դասընթաց

"Training of Youth Workers"

Երբ. Օգոստոս - Դեկտեմբեր 2024 թ.

Որտեղ. Շիրակի, Արագածոտնի և Գեղարքունիքի մարզեր, Հայաստան

Նպատակ. Կատարելագործել երիտասարդների հետ պրակտիկ աշխատանք կատարող անձանց մասնագիտական և անձնային որակները՝ ազգային և ՏԻՄ մակարդակում որակյալ և գիտելիքահեն երիտասարդական աշխատանք իրականացնելու համար:

Նկարագրություն. 2024 թվականին «Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» ծրագիրը Գյումրու «Երիտասարդական Նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն իրականացրել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսական աջակցությամբ՝ ՅՈՒՆԻՍԵֆ-ի հայաստանյան գրասենյակի հետ համագործակցությամբ:

Ծրագրի շրջանակում իրականացվել է եռափուլ դասընթաց, որին ընտրվել և մասնակցել են 25 ներկայացուցիչներ պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններից, ԶՀԿ-ներից և Հայաստանում գործող տարբեր երիտասարդական կենտրոններից, որոնք զբաղվում են երիտասարդական աշխատանքով կամ որոնց գործառույթներն առնչվում են երիտասարդության հարցերին:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐՆ ԵՆ ԵՂԵ՛Լ՝

- Երիտասարդական աշխատանք,
- Երիտասարդական պետական քաղաքականություն,
- Ուսումնառության տեսակներ. ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթություն,
- Հոգեկան առողջություն և ներառականություն,
- Թիմային աշխատանք և առաջնորդություն,
- Ծրագրերի մշակում, իրականացում, մշտադիտարկում և գնահատում,
- Երիտասարդական միջազգային համագործակցություն:

Ծրագրի ընթացքում մասնակիցներն ընդգրկվել են մի քանի փուլերով կազմված վերապատրաստման դասընթացներում, որոնց միջև ընկած ժամանակահատվածում նրանք իրականացրել են գործնական առաջադրանքներ՝ ուսումնասիրելով իրենց համայնքներում առկա երիտասարդական հիմնախնդիրները: Մասնակիցները քարտեզագրել են հիմնական մարտահրավերները, մշակել դրանց լուծմանն ուղղված ծրագրային գաղափարներ և կյանքի կոչել մի շարք տեղական նախաձեռնություններ:

When: August - December 2024

Where: Shirak, Aragatsotn and Gegharkunik regions, Armenia

Aim: To enhance the professional and personal skills of youth workers, enabling them to deliver high-quality, knowledge-based services at both local and national levels.

Description: Gyumri “Youth Initiative Centre” NGO implemented the “Training of Youth Workers” with the financial support of the Ministry of Education, Science, Culture and Sports of the Republic of Armenia, in cooperation with the UNICEF Armenia Office.

A three-stage course was implemented within the framework of the programme, in which 25 representatives from state and local self-government bodies, CSOs and various youth centers operating in Armenia, which are engaged in youth work or whose functions are related to youth issues, were selected and participated.

MAIN TOPICS OF THE COURSE WHERE THE FOLLOWING:

- Youth work,
- State youth policy,
- Types of training. formal, non-formal and informal education,
- Mental health and inclusion,
- Teamwork and leadership,
- Program development, implementation, monitoring and evaluation,
- International youth cooperation.

In between the three-stage training courses, the participants completed home assignments by mapping youth issues of their communities, developed and implemented projects aimed at solving some of those issues.



«EmpowerYouth. Երիտասարդներին հուզող հարցերի շուրջ որոշումների կայացման գործում երիտասարդական կազմակերպությունների կարողությունների զարգացում»

"EmpowerYouth: Enabling Youth Organizations to Shape Decision-Making on Issues that Matter Most to Young People"

Երբ. 01 նոյեմբեր - 31 դեկտեմբեր 2024 թ.

Որտեղ. Հայաստան

Նպատակ. Խթանել երիտասարդների քաղաքացիական ակտիվությունը և մասնակցությունը կլիմայի փոփոխության դեմ պայքարի արշավներում, որոնք հատկապես մտահոգիչ են երիտասարդների համար:

Նկարագրություն. Երկամյա Էրազմուս+ ծրագիրը մեկնարկել է 2024 թվականի նոյեմբերին և իրականացվում է Եվրոպական միության համաֆինանսավորմամբ՝ Ռումինիայի Եվրոպական քաղաքականության կենտրոնի (CRPE) կողմից՝ Եվրոպական հարցերի հետազոտությունների և շահերի պաշտպանության կենտրոնի (Մոլդովա), Ատինատի ասոցիացիայի (Վրաստան) և Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի (Հայաստան) հետ համագործակցությամբ:

Ծրագրի մեկնարկն ազդարարվեց դեկտեմբերի 3-ին գործընկերների առցանց հանդիպումով:



When: 01 November - 31 December 2024

Where: Armenia

Aim: The “EmpowerYouth” Erasmus+ KA2 project aims to support youth engagement through climate action - a topic that resonates strongly with young people and can serve as a catalyst for broader civic participation.

Description: The two-year project “EmpowerYouth” which launched in November 2024 is implemented by the Center for European Policies (CRPE) in Romania in partnership with the Center for Research and Advocacy in European Affairs (Moldova), Association Atinati (Georgia), and Gyumri Youth Initiative Centre NGO (Armenia) with the co-financing of the European Union.

The launch of the project was announced on the 3rd of December with an online kick-off meeting of partners.



4

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

STRATEGIC AIM

ԿԱՅԱՑՆԵԼ ԵՆԿ-Ն ՈՐՊԵՍ ՓՈԽԱԿԵՐՊՈՂ
ԿԱՌՈՒՅՑ

Develop YIC as a transformational establishment

ԽՆԴԻՐՆԵՐ

4.1 Կատարելագործել ենք կառավարման
համակարգերը:

4.2 Պահպանել ենք-ում ստեղծարար և
գիտելիքահեն մշակույթը:

4.3 Մեծացնել ենք-ի ֆինանսական
անկախությունը:

OBJECTIVES

4.1. To improve YIC management systems.

4.2. To maintain a creative and knowledge-based
culture in YIC.

4.3. To increase the financial independence of YIC.

«ԲայքԼայֆ» սոցիալական ձեռնարկատիրություն

"BikeLife" social entrepreneurship

Երբ. 1 Մարտ - 30 Նոյեմբեր 2024 թ.

Որտեղ. Շիրակ, Գեղարքունիք, Հայաստան

Նպատակ. Քարոզել հեծանվավարությունը՝ նպաստելով երիտասարդների կյանքի որակի, շրջակա միջավայրի բարելավմանը, համայնքի ենթակառուցվածքների, զբոսաշրջության զարգացմանը՝ մատուցելով տեղացիներին և հյուրերին մատչելի ծառայություններ:

Նկարագրություն. «ԲայքԼայֆ» ՍՁ-ն տրամադրում է հետևյալ ծառայությունները՝

- հեծանիվների, հեծանվային պարագաների վարձույթ,
- հեծանվավարության ուսուցում,
- հեծանվարշավների կազմակերպում:

2024 թվականին եղել է մի քանի հանրային միջոցառումների մասնակցություն: Հունիսի 5-ին՝ «Շրջակա միջավայրի համաշխարհային օրվա» միջոցառումների շրջանակներում, Եվրասկումբ Գյումրիի հետ համագործակցությամբ Գյումրի քաղաքում իրականացվել է հեծանվային երթ, որի նպատակն էր համայնքի բնակիչների շրջանում բարձրացնել շրջակա միջավայրի հանդեպ հոգատարությունը: Հեծանվատրեյին մասնակցել են մոտ 20 երիտասարդներ:

Օգոստոսի 11-ին՝ Երիտասարդության միջազգային օրվա շրջանակներում Գյումրու Վարդանանց հրապարակում իրականացվել է անվճար հեծանվաուսուցում տեղի երիտասարդների և քաղաք ժամանած հյուրերի համար: Հեծանվաուսուցումից օգտվել են ավելի քան 50 երիտասարդներ:

Իսկ օգոստոսի 12-ին նույն օրվա շրջանակներում Գավառ քաղաքում կազմակերպվել է հեծանվային երթ «Սևանի հեծանվային ակումբ»-ի և տեղի երիտասարդների մասնակցությամբ: Նպատակն էր Գավառում բարձրացնել բնակիչների իրազեկվածությունը՝ Երիտասարդության միջազգային օրվան նվիրված միջոցառումների և «Կանաչ հմտություններ»-ի կարևորության վերաբերյալ: Միջոցառմանը մասնակցել են 50-ից ավել հեծանվորդներ:



When: 1 March - 30 November 2024

Where: Shirak, Gegharkunik, Armenia

Aim: To promote cycling, contributing to the quality of life of young people, improving the environment, developing community infrastructure, and tourism, by providing affordable services to locals and guests.

Description: "BikeLife" SE provides the following services:

- rent of bicycles and accessories,
- cycling training,
- organising bicycle trips.

In 2024, there was participation in several public events. On June 5, as part of the "World Environment Day" events, a bike ride was held in Gyumri in cooperation with Euroclub Gyumri, the aim of which was to increase care for the environment among the community's residents. About 20 young people participated in the event.

On August 11, as part of the "International Youth Day 2024", free cycling lessons were held at Vardanants Square in Gyumri for local youth and guests visiting the city. More than 50 young people benefited from the cycling lessons.

On August 12, within the framework of "International Youth Day 2024", a bike ride was organized in the city of Gavar with the participation of "Sevan Cycling Club" and local youth. The goal was to raise awareness among residents of Gavar about the events of "International Youth Day 2024" and the importance of "Green Skills". More than 50 cyclists participated in the event.



Հոկտեմբեր ամսին «Կարիտաս-Արեգակ» հիմնադրամի շահառուների համար կազմակերպվել է հեծանվաուսուցում և հնարավորություն է ընձեռնվել մասնակցել միջոցառման, որի շրջանակներում հեծանվավարությանը մասնակցել են հաշմանդամություն ունեցող երիտասարդներ:


Մջոցառումների, դրանց թողած ազդեցության, հեծանվային մշակույթի կարևորության, առողջ կենսակերպ վարելու անհրաժեշտության մասին տեղեկացել է ավելի քան 18 հազար մարդ՝ սոցիալական ցանցերում տեղադրված հրապարակումների միջոցով:

Վարձակալության ծառայությունից առաջացած շահույթը ծառայեցվում է ԵՆԿ ՀԿ-ի «Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի գործառույթների իրականացմանը, որից օգտվում են հարյուրավոր դեռահասներ ու երիտասարդներ:

Առաջիկա արշավների ու լուսավոր պահերի մասնակիցը լինելու համար կարող եք հետևել մեր սոցիալական էջերին:

 **Ֆեյսբուք**
<https://www.facebook.com/BikeLife.Gyumri>

 **Ինստագրամ**
<https://www.instagram.com/bikelife.gyumri/>



In October, cycling training was organized for the beneficiaries of "Caritas-Aregak" Foundation within the framework of which young people with disabilities participated in cycling.

Through posts on social media, more than 18,000 people have learned about these events, their impact, the importance of cycling culture, and the need to lead a healthy lifestyle.

The profits from the activities are used to implement the functions of "Gyumri Youth House" open youth centre of YIC NGO, which serves hundreds of teenagers and young people.

You can be a participant in the upcoming campaigns and bright moments with BikeLife by following us on

 **Facebook**
<https://www.facebook.com/BikeLife.Gyumri>

 **Instagram**
<https://www.instagram.com/bikelife.gyumri/>





**ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ**

YOUTH INITIATIVE CENTRE

YIC.AM

Ալեք Մանուկյան 26, Գյումրի 3108, Հայաստան
26 Alek Manukyan, Gyumri 3108, Armenia
(+374) 95 91 91 97
yic@yic.am